

122

ԲԱՅԼԵՎԻԿԻԿՅԱՆ
ՅԵՐՐՈՐԴ
ԳԱՐՆԱՆԱՑԱՆ

ԱԳՐՈԽՈՍ Ն. ՂԱԶԱՐՅԱՆ

ԱԳՐՈՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ
ԲԱՅԼԵՎԻԿԻԿՅԱՆ ՅԵՐՐՈՐԴ
ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻՆ

10 APR 2018

ԱԳՐՈՆՈՄ Ն. ԴԱԶԱԲԱՆ

- 122

ԱԳՐՈՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ
ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ՅԵՐՐՈՐԴ
ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻՆ



ԲԵՐՔԻ ՎՈՐԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ
ՅԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Խորհրդային Միության ինդուստրացման և գյուղատնտեսության մեջ մեքենացման բազայի վրա գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումն աննախընթաց թափով աճում և ամրապնդվում է : Միության չքավոր և միջակ գյուղացիության 60 տոկոսն արդեն մտել է կոլտնտեսությունները : Աճում ու ամրապնդվում են կոլտնտեսությունները : Գյուղատնտեսության վերակառուցման առաջավոր ջոկատները՝ մեքենատրակտորային կայանները գեր անցյալ տարի իրենց պողպատյա ջոկատներով հերկել և ցանել են 20 միլիոն հեկտար : Մեզ մոտ այս տարի մեքենատրակտորային կայաններն ընդգրկելու յեն վոչ միայն բամբակագործական բոլոր շրջանները, այլև Լենինականը, Ստեփանավանն ու Ախուտան :

Կոլեկտիվ տնտեսությունները, հիմնականում կիրառելով գործալարձը, ձեռք են բերել մի շարք քանակական և վորակական հաջողություններ :

Գյուղի սոցիալիստական վերակառուցման հետ մեկտեղ շանքերի տարածությունը հսկայական չափերով աճել և ի հաշիվ չողուագործված խոպան հողերի և միջնակաների : Անցյալ տարվա 1288 հազար հեկտար դարնանացանի դիմաց , մենք այս տարի ունենք 330 հազար հեկտար : Միաժամանակ մեծ չափով աճում են տեխնիկական կուլտուրաների և կերաբույսերի մշակույթները :

Սակայն սոցիալիստական գյուղատնտեսության վերակառուցման ընթացքում մենք նրա մի ողակում աննորդելի կերպով չափազանց հետ ենք մնում. այս՝ բներքի բարձրաց-

ման ու նրա վորակի տօպարեղն է, վորոն այնքան խոչը նշանակություն ունի մեր տնտեսության համար :

Դեռ 1928 թ. դեկտեմբերի 15-ին Միութենական Կենտրոնագծի բերքի բարձրացման վերաբերյալ հրատարակել եր հասուլ դեկրետ, վորի համաձայն ամբողջ Խորհրդային Միության մեջ հնդկամյակի ընթացքում բերքը պետք է բարձրացվեր 35 տոկոսով:

Յեթև մենք նայելու լինենք, թե այդ ուղղությամբ անցած տարիներին ինչ աշխատանքներ ենք կատարել, կտեսնենք, վոր այդ աշխատանքը չափաղանդ անբավարար ե:

Սոց. գյուղատնտեսությունը բերքատվության բարձրացման ասպարիզում չափաղանց շատ անելիքներ ունի վերադաս որդանների վորոշումներն իրագործելու ռուղղությամբ :

Բայլշեիկյան այս յերբորդ գարնանացանին մենք վրձուական բեկում պետք ե առաջ բերենք մեր աշխատանքների մեջ 100 տոկոսով կիրառելով այն բոլոր աղբոծեռնարկումները, վորոնք պլանով նախատեսված են բերքի բարձրացման համար։ Ներկայում ս զյուղատնտեսության վորակական ցուցանիշների բարձրացման խնդիրը հանդիսանում է մեր հիմնական խնդիրների առանցքը։ Ամենից առաջ մեր աշխատանքներն այս գարնանացանին պետք ե ծավալել այնպես, վոր ասլահովիլի կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպչական և քաղաքական ամրապնդումն՝ ամենաանխա պայքար կազմակերպելով դասակարգային թշնամու՝ կուլտակի, նրա իշենուու՝ դաշնակի և կուլակի ագենտուրա՝ աջ և «ձախ» ուղղութունների դեմ։

Առաջանաւեսություններում և կոլտնտեսություններում
աղբոտեինիկայի նորագույն մեթոդները կիրառելով և մաս-
սայականացնելով, լրիվ կերպով ապահովենք գարնանացա-
նի վորակական ցուցանիշերի կատարումը:

Այս տարի ցանքերի վորոշ առկոսի աճման առաջադրանքին գուգընթաց, կուսակցությունն ու կառավարությունն ուժեղ թափով չեշտը զնում են բերքի քանակական և վորակական ցուցանիշների բարձրացման վրա :

Մեր խորհանտեսություններն ու կոլտնտեսություններն իրենց աշխատանքները պետք ե այնպես վերակառուցեն, վոր բերքի բարձրացումը հանդիսանա նրանց աշխատանքների առանցքը : Այս թե ինչ է ասում ընկ : Յակովլեվը «պայյքար բերքի համար» խորհանտեսության մեջ արտասանած իր ճառում : «Կոլտնտեսություններն ու խորհանտեսությունները տակավին չեն սովորել կովել յերաշտի, աշնանային անձրևների, չոր քամիների գեմ և այլն : Նշանակում ե պետական խոշոր տնտեսություն և կոլտնտեսություն ստեղծելու պրոբլեմը յուժենալուց հետո, մենք բայց կորեն պետք ե ձեռնարկենք լուծելու նաև բարձր բերք ստանալու խնդիրը՝ խորհանտեսություններում ազգունում ական գիտության բոլոր նվաճումները կիրառելու հիման վրա» :

Ճիշտ և ժամանակին կատարված մի շարք ազգունարկումները կրկնապատկում են բերքը :

1931 թվին վորոշ շրջաններ թերազնահատելով ազգունարկումների խոչոր նշանակությունը, լրիվ և ժամանակին չկարողացան կատարել այն, վորի հետեանքով թե հացահատիկների և թե տեխնիկական կուլտուրաների բերքի պլանները թերակատարվեցին :

Բերքի քանակի և վորակի բարձրացումը պետք ե հանդիսանա կոլտնտեսական, չքավոր և միջակ գյուղացիության ու շաղրաւթյան առանցքը : Ամբողջ ուժերով լրիվ ու ժամանակին կատարելով մի շարք ազգունարկումներ, 100 տոկոսվ ապահովենք բերքի թե քանակի և թե վորակի բարձրացումը :

Այս գարնանացանին զյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության վորակական ցուցանիշները բարձրացնելու

համար, բոլոր խորհանտեսությունները և չքավոր ու միջակ մեծատնտեսները լրիվ կերպով պիտի զործադրեն ստորև առաջադրած բոլոր ազգունարկումները, վորոնք ի մի առաջադրած խոշոր չափությունում են բերքատվությունը :

ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Բույսը նորմալ աճելու և լավ բերք տալու համար կարիք ունի բույսի, տաքության, ողիքի, ջրի և սննդանյութերի : Այս բույրը բույսին տալու համար, մենք հողն այնպիս պիտի մշակենք և բույսի համար այնպիսի պայմաններ ստեղծենք, վոր նա հնարավորություն ունենա ստանալու իր աճեցողության համար անհրաժեշտ բավարար քանակությամբ ոնդանյութեր :

Սյոյ պայմաններից ամենագլուխալորը՝ հողը մշակելն ե : Մենք հողն այնպես սիտի մշակենք, վոր բույսը կարողանա նրանից սննդանյութեր և ջուր վերցնել և ողիք անհրաժեշտ պայմաններ ունենալ : Հատկապես ջրի հարցը մեր պայմաններում շատ մեծ նշանակություն ունի, մանավանդ դաշտային ցրջաններում վլորտեղ տառաց ջրելու բույսը կանոնավոր զարգանալ չի կարող : Հայաստանի շատ վայրերում ջուր չկա, հողերն անջրգի են, իսկ մնացած ցրջաններում ել ջուրն այնքան քիչ ե, վոր բույսի պահանջները վորոշ չափով բավարարելու համար այն պիտի ողտագործել ինայողաբար :

Գարնանացանի համար հողը պիտք ե պմառ զութանով խոր հերկել և թուլնել զարնանը ցանելու համար : Այդպիս պիտի անել մանավանդ տեխնիկական և շարքահերի բույսերի համար : Յեթե ամառը հնարավոր չե հերկել, ապա զարնան հերկը պիտի աշնան անել : Փորձերը ցույց են տվել, վոր ամառը կամ աշնան շուտ կատարած հերկի և զարնան հերկած ու ցանած ցանքերի բերքի միջև հակայական տարբերություն կա : Գարնանացանի համար ամառը կամ աշնան կատարած գարը հերկարին 3-4 ցենտներ ավելի բերք ե տալիս : Անկատած ե, վոր հերկը պիտի կատարել դութանով,

18—20 սանտիմետր խորությամբ : Արորն արդեն ապրել եւ իր գարը : Նա դուրս եւ շպրտվել մեր շատ շրջաննից : Հատ ու կենտ մնացել եւ միայն միքանի զյուղերում , այն ել զարնացանին անպայման պիտի գործածությունից հանել :

1. Ամառ և աշնան վաղ կատարած հերկն այն առավելությունն ունի , զոր հողը լավ հողմահարվում ե , այսինքն՝ արեի , անձրեսի և ողի աղղեցության տակ հողի մասնիկները քայլայվում են և հողը հարստացնում են բույսի համար անձրաբեշտ սննդանյութերով :

2. Վարելիս , յերբ հողը շուռ ե գալիս , մոլախոտերի սերմերի մի մասն ընկնում ե հողի ներքին խոր շերտերը , փառում ե , մի մասն ել թեև ծլում ե , բայց զարնանը ցանելու համար հողը թեթև վարելիս կամ փոցիսելիս նրանք վոչնչանում են : Այս ևս շատ մեծ նշանակություն ունի , վորովհետև մոլախոտերը դաշտերում ապրում են մեր կուլտուրական բույսերի հաշվին , նրանց սննդի մի մասը և ջրի մեծ մասը դրանք են ողտագործում :

Ուսումնամասիրությունները պարզել են , զոր մոլախոտերը մի հեկտարից գոլորշացնում են մոտ 15 հազ . դույլ ջուր : Մոլախոտերը հողային բոլոր պայմաններին շուտ հարմար վելու և լավ աճելու հատկություն ունեն : Այսպես , զոր մոլախոտերը խառն լինելով մեր ցանած բույսերի հետ , խլում են նրանց սննդում ու ջուրը , բույսերին զրկում են կանոնավոր սնվելու , աճելու և լավ բերք տալու հնարավորությունից : Ուրեմն , վոչնչացնելով մոլախոտերը , մենք սննդապատճոր պայմաններ ենք ստեղծում ցանած բույսերի համար ավելի լավ զարգանալու և լավ բերք տալու :

3. Վազ աշնան կատարած վարն այն առավելությունն ունի , զոր նա մեծ քանակությամբ խոնավություն և կուտակում և ապադայում ցանվելիք բույսի համար ջրի պաշար պատրաստում : Այս հանգամանքը շատ մեծ նշանակություն ունի մասնավոր մեր անջրդի և սակավաջուր դաշտային շրջանների համար

Նախ , վարած հողը կլանում է աշնան անձրեներից առաջացած ջուրը , յերբ ճյումը նստում է վարած հողերի վրա , նրա հալելուց առաջացած ջուրը նույնպես մեծ մասով անցնում է վարած հողի ներքին շերտերը , ամբարվում է այնտեղ և , վերջապես , գարնանային ջրերը նույնպես ծծվում են վարած հողի մեջ և իջուր չեն կորչում : Այսպիսով աշնան հերկը մեծ քանակությամբ ջուր է ամբարում :

4. Աշնանը հերկելիս , մանավանդ , յերբ հերկը շուտ է կատարվում , բերքը հավաքելուց անմիջապես հետո , քանի դեռ ծղոտի մնացորդները չեն փտել ու այրվել , հողը շուտ է տրվում , բույսի մնացորդները մնում են հողի տակ և այնտեղ գանգաղորեն փտում : Այսպիսով , գարնանացանի կուլտուրաների համար պնդի պաշար է պատրաստվում : Իսկ յեթե բույսերի մնացորդներն արեսի աղղեցության տակ են քայլավում ու փտում , նրանց սննդանյութերի մեծ մասը հողի մեջ չեն մտնում , իջուր կորչում են և ապագա բույսի համար անպետքանում :

Եթե ամառը , բերքահավաքից անմիջապես հետո , հնարավորություն չկա կանոնավոր խորը վար անել , ապա պիտք է թեթև , չորս-խոփանի գութանով 6—7 սանտիմետր խորությամբ խողանավար անել և թողնել՝ աշնանը նորից խորը վարելու համար : Փորձերը ցույց են տվել , զոր այսպես կատարված աշնան վարից 4—6 ցենտոներ ավելի բերք է ստացվում :

5. Աշնանավարի դեսկրում շատ վնասատուների ձվերը և հարսնուկները , հողի յերեսն ընկնելով , վոչնչանում են : Բացի դրանից , ձմեռը հողը փլարուն է գառնում , ցաւրտը թափանցում է հողի ներքին շերտերը , զորի հետևանքով շատ վնասատուներ վոչնչանում են :

Աշնան հերկած արտը թողնում են այդպիս , գարնանը փցիսում են , հողը հավասարեցնում , ապա ցանում և իսկ յեթե հողը քիչ թուլացած ե , նորից թեթև բաղմախոփ գուշանեցնում է :

թաններով (3—4 կտմ 8 խոփոնի) վարում են, նորից փոյշ-
խում, հողը հավասարեցնում ու ապա սերմում:

Այս տարի մեր շրջանները թերակատարել են՝ աշնանավա-
րի պլանը: 330 հողար հեկտար գարնանացանի դիմաց ու-
նենք 278-36 հեկտար աշնանավար: Մնացածը պետք է գար-
նանը վարել: Խոկ գարնանավարը չուտ սկսելու համար պիտի
պատրաստ լինել: Այն շրջաններում, վորտեղ հնարավոր ե,
պետք ե փետրվարից սկսել այդ աշխատանքները: որինակ՝
Ալահվերդի, Դափան և այլն:

Գարնան վարը պիտի չուազել վազ կատարելու, վորսես-
պի ցանքը չուշանա, վորովհետև գարնանը վորքան չուտ ցա-
նենք, այնքան բարձր բերք կսանանանք:


Մեր հողերի զղալի մասն այնպիսի դրության մեջ են,
վոր աշնան կամ վազ գարնան կատարած վարւ նրանց համար
վճռական նշանակություն ունի:

Գարնան վարը նաև յնպես պիտի կատարել գութաններով՝
18—20 սանտիմետր խորությամբ: Այս գարնանացանին ա-
րորը դրությունից վերջնականապես գուրս ովիտի հո-
նել, վոչ մի շրջան և վոչ մի դյուզ արորով հերկ չպիտի
անի: Արորը խորը չի վարում, հողը չուտ չի տուլիս, իսկ այդ
վարի ամենապիշտավար պայմանն ե: Նա միայն հողը յերեսից
չանգուռմ ու խաղմդում ե:

Վարը պիտի լինի լավորակ, նորմալ, 18—20 սանտիմետր
խորությամբ և պիտի լավ չուտ տալ: Վարի մեջ խամեր չպի-
տի թողնել: Մանավանդ տրակոտորվ վարելիս, պետք ե ա-
մեն կերպ ուշը գարնել, վոր տրակոտորի պտույտների ժա-
մանակ, հողի ծայրերում մեծ խամեր չմնան և լավ չուտ
արված լինի:

Վարի վորակը կախված ե գութանը կանանավարելուց և
խօփերը ժամանակին ու կանոնավոր սրելուց: Թերես այդ
շատ փոքր հարց ե թվում, բայց լուսարկ վարի ամենապեծ
դրավականը սրած խօփերն են: Պիտի աշխատել, վոր հերկի

ակոսները լինեն խոր և լայն: Եեղ ու ժապավենաձև կատա-
րած վարի հողը լավ շուռ չի արվում:
Յանելուց առաջ հողը պիտի փոցինել և լավ հավասարեց-
նել, վորպեսզի բոլոր սերմերի ծլելու և զարգանալու համար
հալասար պայմաններ ստեղծվին: Պիտի փոցինել զիգզագ
կոչված յերկաթե փոցիով:



Նկար №1.—Զիգզագ փոցին

Վերջինս հողը լավ փափացնում ե և հավաքում մոլ-
խոտերի մնացորդները: Շատ խոնավ հողերը չպետք ե փո-
ցինել անմիջապես, այլ քիչ՝ չորանալուց հետո, հակառակ՝
դեղքում հողը կամրանա, վորի հետևանքով բույսի նոր-
մալ աճեցողությանը կը վարանա: Շատ չոր հողերը
առևյալու չպիտի փոցինել: Չոր տեղերը պետք ե փոցին-
անձրենից անմիջապես հետո:

Փողիւը պիտի կատարել իր ժամանակին, զոր արդյունք ստացվի: Փողիւի առամները միշտ պետք ե մաքրել չայի-ըից, կոչտերից և այլ մոլախոտերից, վորակեալի դրանք չխանդարեն նրա նոլամալ աշխատանքը:

Հայի չփոցինելու դեպքում դաշտի յերեսը, մի աեղ խո-
նավություն շատ լինելով, մի ուրիշ տեղ քիչ, և ոերմերն
ընկնելով տարբեր միջավայր՝ միաժամանակ չեն ծլում ու
հասունանում: Այդ ազգում ե բերքի քանակը ու վորակի
վրա: Մի մասը շուտ հասունանալով, թափվում ե, իսկ
մյուս մասը՝ դեռ հասունացած ե հավաքվում:

Գարնանացանի աշխատանքները կազմակերպելիս նրանց այնպես պիտի գասավորել, վոր մոռացության չտրվի նաև աշխանացանի համար վաղ ցել անելը։ Ինչպես աշխանացարը գարնանացանի բերքը բարձրացնում և մեծ չափով, այնպես ել ապլիլին, մայիսին վաղ կատարած ցելն աշխանացանի բերքն ավելացնում ե 30—50 տոկոսով։ Այս հանգամանքը մնու կոլոնտեսությունները պիտի լավ ըստումն և իրենց աշխատանքներն այնպես գասավորեն, վոր 100 տոկոսով ապահովի աշխանացանի համար 81 հազար հեկտար վաղ ցել անելու պլանը։

U. S. P.

Արաթը հողը վոռոգելու մի տեսակն է: Նախքան ցանքը, աշնանը կամ վաղ գարնանը հողը հագեցնում են ջրով: Նկատի ունենալով մեր ջրի պակասությունը, արաթը խոր չոր նշանակություն ունի մեր ջրանների, մանավանդ մեր դաշտավայրի համար, վարտեղ մշակում են տեխնիկական կուտուրաներ, գլխավորապես՝ բամբակ, վորը մեծ քանակությամբ ջուր և պահանջում: Նախ՝ արաթ արած արտը ցելաջուր չի պահանջում, բացի գրանից, մեկից յերկու անգամ պակաս ե ջրվում, քան արաթ չարած դաշտը:

Միքանի տարի յեւ, վոր մեր բամբակացան Ալանեց
ըստ արաթը կիրառվում է, և նրա տված ոգուտը, թի

բանվորական ձեռքի կրծատելու և թե բերքի բարձրացման
տեսակետից, ամենքին Հայտնի յէ: Մեր կողմանակություն-
ները չքալոր-միջակ մենատնտեսները պիտի վաղ գարնա-
ւում հայտնաբերեն առաջի աշխատանքներին:

նից ձեռարկեն արարությունը տևած է մեջ քաշակությունը՝ գուր են պահանջում և միենալուն ժամանակ շատ ջուր են գոլուր և ացնում ու շուտ ել չորանում են և վորոնք աշնանից վարդել են, ուստի արաթ չեն արվել, նման հողերում վաղ գարնանը պիտի արաթ առաւ Արաթի աշխատանքը չափեած ե ուշացնել, վորովհետեւ շուտ ցանք անելը կախված է գրանից: Արաթից հետո 10—15 որ պիտի սպասել, վոր հողի քեշը զա, և ապա ցանել: Ճիշտ վորոշել արաթ արած հողերի քեշը գալու ժամանակը: Քեշը գալուց շուտ կամ ուշ արած ցանքը պակասեցնում ե բերքի քանակը:

Այս մոմենտը ցանքի ժամանակ պիտի ճիշտ զորուսուլ, ու
ռակ վեկրում արդյունք չի ստացվի:

Արաթը պիտի անել այսպես. վարած և չդուցված է և
աի ակոսներով դանդաղ հոսանքով ջուր են կապում : Ակոս-
ները նախորոք պիտի մի փոքր խորացնել, առուներ պատ-
րաստել, տեղ-տեղ կապեր ու կածակներ դնել :

Հողը վարքան գանդաղ և շատ չուր օժը, այսպէս և
մենք մեր նպատակին հասած կլինենք: Հողը ջրով հաղեց
նելուց հետո, ջուրն իսկույն պիտի փոխել, հակառակ դեպ
քում մենք նախ՝ ջրի ավելորդ կորուստ կունենանք և յերկ
ըորդ՝ ջուրը կարող ե լճանալ, իսկ չորանալուց հետո, հող
կկեղևակալի, վորը գարճյալ մեծ վնաս ե: Կեղեվակալա
հողում գուրը իշացումը շուտ ե կատարվում: Ջրի այն պա

շարը, վոր մենք ցանկանում ենք հողի մեջ կուտակել ապա-
գա բույսի համար, իզուր կորչում ե, նորից չորացնելով
հողը: Բայց դրանից, կեղեակալած հողում ոդափոխու-
թյուն չի կատարվում, վորը նույնպես վնաս է: Ոդի պակա-
ռության պատճառով հողի քայլայման պրոցեսները չեն ե-
տարժի մեղ ցանկալի ուղղությամբ:

Ճահճացած, խոնավ և շատ թեթև օանը հողերում
արաթ չպիտի անել: Արաթը այդ կատարել, ինչպես ա-
մինք, ակոսներով և ըստը բաց թողնել ակոսների մեջ նրա
յերկու յերբորդ մասով, այնպես, վոր հողի յերեսը շուտ
թրջվի և չի կատարված, վորովհետ, յեթե ակոսներով լիքը
ջուր կառվի՞ լնացում առաջ կդա: Արաթի ջրի հոսանքը
պիտի լինի թույլ և դանդաղ:

Արաթի մյուս առավելությունն այն ե, վոր հողի վոյց-
իումով նպաստում ենք բույսի մատաղ ծիլերի արագ և ժա-
մանակին բուսներուն: Սակայն, մի բան չպիտի մոռանալ,
վոր արաթ արած հողում ցանք անելու համար պետք և լի-
նել պատրաստ, նախապես դասալորել մեքենաները, քաշող
ուժն ու մի որ առաջ թրջված սերմացուն, վորպեսզի հողի
հուսունացման (քեչի) ճիշտ ժամկետին ցանել: Թրջված սեր-
մացուն արաթ արած հողում համեմատաբար պիտի խորը
ցանել (4—6 սանտիմետր), այնպես, վոր սերմն ընկնի խո-
նավ հողի մեջ, վորովհետեւ թեշի ժամանակ հողի յերեսը
1—6 սանտիմետր չորանում ե, իսկ սերմը չոր հողում ծլելչի
կարող: Դրա համար ել, ինչպես վերեւում ասացինք՝ այս
պեղում թրջած սերմացուն խորը պիտի դցել:

ՍԵՐՄԱԶՑՈՒՄ ՅԵՎ ՏԵՍԱԿԱՌՈՒԽՄ

Քերքի բարձրացման համար շատ մեծ նշանակություն
ունի սերմի գտումն ու տեսակավորումը: Ներկայումս յու-
րաքանչյուր կորոնանուական կամ չքամից և միջակ մենա-
կունքն, շատ լավ են հասկացել, սերմերի գտման և տեսա-
կավորման նշանակությունը բերքի բարձրացման դործում:

Քինչ ցանես, այն ել կհնձես», —տում և ժողովրդական ա-
ռածը: Մաքուր, առողջ, լիքը սերմից կստացվի բարի և
շատ բերք, ջարդված, նիհար, վտած սերմից կստացվեն
քեչ բերք և նվազ հատիկներ:

Փորձերը ցույց են տվել, վոր սերմի գտումը բերքը բարձ-
րացնում ե 1—15 ու կես անգամ: Միջին թվով առնվազն 10—
15 տոկոս աճ և ստացվում: Եեթե մեկ հեկտարից չըլո-
ված սերմի դեկղում սպատվում ե 8 ցենտներ գարնան ցո-
րեն, ապա սերմը զտելով, կստանանք մոտ 9,5 ցենտներ:
Եեթե կոլտնտեսությունը 100 հեկտար գարնան ցորեն և
ցանում, նա զտված սերմ ցանելու դեկղում կստանա 150
ցենտներ ավելի հացահատիկ: Ամբողջ Հայաստանում այս
գարնանացանին մենք ցանելու յենք 132·515 հեկտար ցո-
րեն: Դրանց սերմը մենք 100 տոկոսով զտելով, կստանանք
մոտ 20 հազար տոնն ավելի հացահատիկ: Այս կարեսը հան-
գամանքի վրա մեծ ուշադրություն պիտի դարձնել, և վոչ
մի հատիկ սերմ առանց զտելու չպիտի ցանել:

Ժողկոմիսորհի և զողովողկոմատի վորոշմաբ 1931 թ.
բերքը պիտի զափեր և տեսակավորվեր կալում՝ կալմելու
ժամանակ և մաքուր սերմացուն առանձնացվեր: Մեր կոլ-
տնտեսություններից միքանիսն ու մենատնտեսներից շա-
տերը թերացան այդ կարեսը աշխատանքը ժամանակին կա-
տարելու մեջ: 1932 թ. գարնանացանի համար պահանջվող
սերմացի շատ փոքր տոկոսն ե զտված: Պետք ե շտուպել
հերմացի շատ փոքր տոկոսն ե զտված: Պետք ե շտուպել
հենց այժմյանից սկսել սերմացումը, վոր գարնանացանին
պատրաստ լինենք:

Սերմացումն և տեսակավորման մեքենաներ՝ արիե-
ներ մենք հայաստանում բավական թվով ունենք, այնպես,
վոր այդ տեսակետից սերմացումն աշխատանքն ապահով-
ված է: Տրիերներն այնպես պիտի աշխատեցնել, հարկ յե-
ղած գեպում 2—3 հերթով, վորպեսզի հնարավոր լինի 100
տոկոսով զտել ամբողջ սերմացուն:

Չտած, բավորակ սերմից, ոնկասկած, մենք-բարձ-

բերք կստանանք : Այս կարեոր աշխատանքի համար վոչ մի ջանք չպիտի խնայել : Մեր կոլտնտեսություններն այդ աշխատանքի նախաձեռնողները պիտի լինեն : Նրանք շահագրգուված պիտի լինեն 100 տակոսով զտած սերմ ցանելու :

Մերմը զտելով, մենք, բացի առողջ, լավորակ հատիկներ ունենալուց, այն մաքրում ենք նաև վայրի բույսերի՝ մոլախոտերի սերմերից : Խոկ ամենքին հայտնի յն, վոր գրանք մեր դաշտերի համար մեծ չափ են հանդիսանում : Դրանք խլում են կուլտուրական գույսերի տարածությունը, մնունդը և, միևնույն ժամանակ, զանազան հիմանդրությունների բուն ու տարածողը հանդիսանում :

Յեթե զյուղում մի, կամ միքանի տնտեսության սերմացուն չզավի մոլախոտերի սերմերից, ապա այդպիսի անմաքուր սերմ ցանելով, մոլախոտերը կվարակեն նաև հարեվան արտերը, զբանց միջոցով կտարածվեն նաև առաջացած հիմանդրությունները : Մոլախոտերի դեմ կրվելու հիմնական միջոցներից մեկը սերմացուումն ե : Դրա համար ել մեր կոլտնտեսությունները գյուղի հացահատիկների զտման և ախտահանման զործի շեֆությունն իրենց վրա պիտի վերցնեն և այդ աշխատանքն այնպես կազմակերպեն, վոր անդամ մի բուռ սերմացու առանց զտվելու չմնա :

Մերմացուն նախ քան տրիերով զտելը, պիտի մաքրել քարհան մեջնայով : Վերջինս մաքրում ե հողը, հարդը, մեծ քարերը և ջարդված հատիկները : Հետո պիտի անցկացնել սերմագտիչով, վորը տեսակավորում ե հացահատիկը՝ բաժանելով մանր ու խոշոր տեսակների, առանձնացնում ե նույն սերմացվի մեջ յեղած գյուղութիւն հատիկները :

Տրիերներից ամենալավը համարվում ե դերմանականը (Գեյդ), վորը մենք ստանում ե լինք Գերմանիայից, բայց այժմ նույն ախտի արիերներ պատրաստվում են մեզ մոտ՝ վարունեժում : Վարունեժի տրիերների հիմնական սկզբունքն այն է, վոր զբանը շըշապատված ե մաղերով, խոկ այդ մաղերի անցքերը հետզհետե վորքանում են : Վերևում կա 4

անցք, վորոնք գյուղուղները չեն անցկացնում, խոկ հացահատիկներից մեծերը, զատվելով և տեսակավորվելով, թափ-վում են համապատասխան անցքերից մեծ հատիկից փոքրը : Աշխատանքի ընթացքում պետք ե լավ հսկել, գլանի կանոնավորությանը, վոր սերմաղտումը կանոնավոր և լրիվ լինի :

Պետք ե ցանել ամենամեծ և ծանր հատիկները, վորոնք բարձրացնում են բերքի թե քանակը և թե վորակը : Ուրեմն՝ սերմը զտելով, մենք կուլում ենք մոլախոտերի դեմ՝ նրանց սերմը դաշտում չցանելով :

Ցանում ենք առողջ, մեծ, ծանր և լիքը հատիկներ, վորոնք հարուստ են սննդանյութերով, տալիս են առողջ ծի-լիք և բարձրացնում են բերքը : Բացի սերմերը զտելուց և տեսակավորելուց, պետք ե փորձել նաև նրանց ծլունակությունը : Մեր գյուղերում սերմացուն այնքան ել խնամքով ու լավ չեն պահում : Երբեմն լցնում են խոնալ հորերը, վոր-տեղ սերմացուն կորցնում ե իր ծլունակությունը : Բացի դրանից, կան սերմեր, վորոնք իրենց ծլունակությունը պահում են 1—2 տարի, կան և այնպիսիները, վորոնք պահում են 2—3 տարի, 5—6 տարի, նույնիսկ՝ 10 տարի :

Մերմացուն խոնավության, ցրտի, տաքության և այլ պատճառներից կորցնում ե իր ծլունակությունը : Վորակովի համոզվենք, թե սերմացուն սիխանի յե և քանի տոկոսով, պիտի փորձել նրա ծլունակությունը : Այս փորձը շատ սովոր է կատարել ամեն մի կոլտնտեսական, հասարակ ձևով կարող ե կատարել ամեն մի կոլտնտեսական, ամեն մի չքափոր և միջակ մենատնտես :

Մերմացվի հատիկներից վերցնում են 100 հատ, շարում թաց չորի մեջ և պահում տաք տեղ : Հետեւում են, թե քանի որից հետո, քանի՞որ ծլեցին, և այդպիս պարզում նրա ծլունակությունը :

Լավ ե համարվում այն սերմացուն, վորի 100 հատիկից 95—97 հատը ծլում ե, միջակ՝ այն սերմացուն, վորից 85—95 հատն ե ծլում : Դրանից պակասը վատ ծլունակություն ու-

նեցողն ե : Պետք ե աշխատել ցանել բարձր ծլունակություն
անեցող սերմեր :

ԱԽՏԱՀԱՆՈՒՄ

Բերքի քանակին ու վորակին շատ մեծ վնաս են պատճառում վնասատուներն ու հիվանդությունները : Դրանց հասցրած վնասն ամբողջ ԽՍՀՄ-ում մեկ միլիարդ ռուբլուց ավել ե : Գյուղացիական ազգաբնակությունը՝ կոլտնահասականներն ու մենատնտեսները գործածում են ամբողջ բնիքի միայն 28 տոկոսը, ինկ 30 տոկոսը փչացնում են վնասատուներն ու հիվանդությունները : Բերքի այս մեծ տոկոսը փրկելու համար, նրանց գեմ պիտի ուժեղ պայքար մղել :

Մեր նախալեռնային և լեռնային շրջաններում, մանավանդ խոնավ տարիներին հացահատիկներին մեծ վնաս են տալիս մրիկն ու ժանդը : Նախքան ցանելը հարկավոր ե դրանց գեմ պայքարել :

Մրիկը սնկային հիվանդություն ե, վոր հացահատիկների սերմի հետ ցանլում ե դաշտում : Նա լինում է յերիուտեսակ՝ քարացած և փոշիացած : Մրիկի սերմերը՝ սպորները փոշու հատիկների նման նստում են հացահատիկների սերմերի վրա, և դրանց կարելի յե տեսնել միայն խոշորացույցով : Մրիկը, սերմի հետ միասին ընկնելով նպաստավոր պայմանների մեջ՝ ծլում ե, բույսի ցողունի վրայով բարձրանում ե հասկի մեջ, այնուհետ զարդանում ե և րոնում ամբողջ հատիկի տեղը :

Մրիկով հիվանդ հասկերը դաշտում յերկում են հեռվից : Նրանք քիչ ցած են ընկնում առողջ հասկերից, ուղիղ են կանգնած, հասկերը կարծ են, լայնացած, ուռած, մուգ կապտավուն կամ սեվագույն : Արդպիսի հասկերն ամբողջովին բռնված են մրիկի փոշե պարկերով, վորոնց մի մասը բացվում ե հենց դաշտում և վարակում առողջ հատիկին, մի մասն ել բացվում ե կալում՝ կարսիլս : Հիվանդ հասկերը սեղմվում են, փոշեպարկերը պատովում են և փոշին նրանում ե հացահատիկների վրա ու վարակում նրանց :

Ահա այս փոշու հատիկներն են սունկի սպորները, վորոնք նորից սերմացու հատիկի հեա ընկնելով դաշտը, ծլում են և ելի տարածվում : Այսպիս ամեն տարի նրանք չառանում են :

Մրիկի հետևանքով ընկնում է բներքատվությունը : Մրիկի հիվանդ հատիկի հացը սև և լինում է վատ համ և ունենում : Նրա դարձանը տավարն ախորժակով չի ուտում, յիրբեմն ել նրան վնասում ե :

Մրիկի գեմ կովելու չափ լավ միջոց կա . այդ ախտահանումն ե : Սերմացուն ախտահանելով, վոճնչացնում են նրա վրա յեղած մրիկի սերմը՝ սպորները :

Ախտահանման յերկու ձեւ կա՝ չոր և թաց :


Ախտահանման ամենատարածված և գործածական ձեր՝ հատիկները Փորմալինի կամ սղնճարջասպի լուծույթի մեջ ըլվանալն ե : Այս թե հեշտ ե, թե աժան, մատչելի ամեն մի կոլտնտնտության և չքալոր ու միջակ մենատնտեսի :

Փորմալինով ախտահանելիս պետք ե վերցնել 300 մաս ջուր, խառնել 1 մաս 40 տոկոսանոց Փորմալին, այսինքն՝ 300 բաժակ լվեն պետի խառնել 1 բաժակ Փորմալինի լուծույթ : Գետք ե բավ չափել, զգուշ լինել և Փորմալինը չափեցնել, հակառակ լեռվզում սերմացուն կարող ե այրվել : Իսկ յեթե քիչ Փորմալին վերցվի, ավա այնպիսի լուծույթ ստացվի, վորը մեռցնի մրիկի սպորները : Լուծույթը պետի պատրաստել վայսե ամանի մեջ :

Սերմացուն պետք ե փոել բրեզինտի կամ կապերախ վրա, ցնցուպով այս լուծույթը ցանել սերմացվի վրա և թիակով լավ խառնել, այնպես, վոր սերմացվի բոլոր հատիկները լավ լավ լինեն, հետո ծափել կապերտով և սուպրակներով : Վերթիշվեն, հետո ծափել կապերտով և սուպրակներով : Վերթիշվեն առաջ պետք ե թրչված լինեն այդ լուծույթով : Հիվանդը առաջ գալու հետո, սեփակ և սուլերում բարակ շերտով փոել բացնելու առաջ առաջ առաջ հատիկները դաշտ տանել, ցանելու :

Հացի պանրը, կարելի յէ սերմացուն լցնել տոպրակները

ըս և խորասուզել ֆորմալինով պատրաստված լուծույթի մեջ, պահել 2-3 րոպե, հանել, փռել բրեղենտի վրա, նորից ծածկել, թողնել 2 ժամ, հետո ստվերում չորացնել և ապա ցանել: Արևի տակ չորացնելիս ֆորմալինը կցնդի և սպասված ուղուար չի ստացվի:



Նկ. 2. Թաց ախտահանման մեքենա—Ա. սերմի արկղ. բ. լուծույթի անոթ. Գ. լուծույթը սերմին խառնող ծորակ.

Կան և թաց ախտահանման մեքենաներ (տես նկար 2), գորոնք թե հատիկի և թե լուծույթի համար իրենց վրա ունեն առանձին ամաններ: Նախորդը պատրաստված լուծույթը և հատիկը լցնում են համապատասխան ամանների մեջ: Լուծույթը հատիկին խառնվում և առանձին ծորակով, համապատասխան չափով բաց են անում այդ ծորակը և մեքենան պտտեցնում: Սերմացուն թրջվում ե և թափում բրեղենտի վրա: Այդ դեպքում նորից պիտի ծածկել, 2 ժամ պահել, ապա սերմը չորացնել և ցանել: 10 ցենտներ սերմացու ախտահանելու համար բավական է 0,5 կիլո ֆորմալին:

Պղնձարջասպով ել կարելի յե ախտահանել, ինչպես չոր, նույնպես և թաց ձեռվ: Վերջին դեպքում նույնպես լուծույթ են պատրաստում՝ 40 լիտր ջրին խառնելով 400 գրամ պղնձ-

արջասով: Այս լուծույթն ել պիտի պատրաստել վայրտն ուշ մանի մեջ: Սերմացուն ուսպառակով խորասուզում են այդ լուծույթի մեջ, պահում 5 րոպե, հետո հանում, փոռում ստվերում, չորացնում և ապա ցանում:

ՉՈՐ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ

Բացի թաց ախտահանմանից, կա և չոր ախտահանման վորը վերջիրս ավելի ու ավելի յե կիրառվում, վորովհետեւ չոր ախտահանման սերմացուն կարելի յե յերկար ժամանակ անվնաս պահել: Սերմացուն կարելի յե ցանքից շատ տառջախտահանել, վորը մեծ նշանականություն ունի դարձնանացանի համար, մանավանդ՝ բանվորական ուժի տեսակետից:


Չոր ախտահանման ժամանակ վորելու, չորացնելու կարիք չկա: Այս դեպքում նույնպես ահագին քանակությամբ տրնտեսվում ե բանվորական ուժ:

Չոր ախտահանմանը շատ եփեկտ է տալիս և մեծ նշանակություն ունի մանավանդ մեր չորային ըլջանների համար, վորտեղ յերեսն հատիկը ցանվում է չոր տեղում (որինակ՝ անցյալ աշնանացաննին): Ֆորմալինով թաց ախտահանմանի ծիլերը նոսր են լինում և նվազ, իսկ չոր ձեռվ ախտահանմանը լավ է ծլում և առողջ ու կինսունակ ծիլեր ե տալիս: Պղնձարջասպի փոշին, փոքր քանակությամբ և հետըդ հետեւ խոնավություն ստանալով, կամաց-կամաց լուծվում է մեղնում մրիկի սպորները՝ նրանց իսպառ վոչչացնելով:

Չոր ախտահանմանը կատարում են կամ ձեռքով, կամ մեքենայի միջոցով: Վերջինս իր առանցքի շուրջը պտտվող ձարձրածեւ փակ անոթ է, վորի մեջ տմբացված են թերեր: Փոշին ու սերմացուն սրանք իրար են խսունում (տես նկար № 3):

Չոր ախտահանման համար պղնձարջասպը (կապույտ քարը) լավ մանրում են: Կարելի յե նաև երկանքով աղալ: Ստացվում ե կիսափոշի, վորը կրակի վրա լավ բովում են: Նրա մեջ յեղած ջուրը գոլորշիանում է, գույնը սպիտակում

և և գառնում և բորակ սպիտակ փոշի : Ահա այդ փոշով և , վոր ախտահանում են սերմացուն : 100 կիլո սերմացիլի համար վերցնում են 250-300 դրամ պղնձարջասպի փոշի , ցորենի հետ լցնում են տոպրակի կամ արկղի մեջ և 5-10 լոպե լավ խառնում են : Այդ դեպքում փոշին նոտում և հատիկների վրա և ախտահանումն արդեն պատրաստ ե :



Նկ. 3.—Չոր ախտահանման մեթեմա

Մեքենայով ախտահանելու դեպքում՝ դարձյալ 100 կիլո սերմացվին վերցնում են 250-300 դրամ պղնձարջասպի փոշի , սերմացուն ու փոշին լցնում են մեքենայի մեջ (նրա $\frac{2}{3}$ -րդ մասը) , մեքենան պատեհեցնում են , վորից փոշին խառնվում ե հատիկներին ու նոտում և նրանց վրա :

Այս ձեռով կարելի յե ախտահանել նաև փարիզյան կանաչով : Այս դեպքում 100 կիլո սերմացվին վերցնում են 50 դրամ փարիզյան կանաչ և վարվում այնպես , ինչպես պղնձարջասպի դեպքում :

Ի՞նչ ե կատարվում , վոր սերմացուն ազատվում և վարկումից :

Ինչպես ասացինք , մրիկի փոշին մեծ քանակությամբ գտնվում և սերմերի վրա : Թույնի փոշին նույնպես նոտում և

սերմերի վրա : Յանձնիս , յերբ սերմն ընկնում ե խոնավ պայմանների մեջ , թույնի փոշին լուծվում ե , հեղուկ դառնում և այս թունավոր հեղուկն է , վոր սպանում և սնկի սպորտներին :

Չոր ախտահանման յեղանակը շատ խոնավ վայրերում չի կարելի գործածել :

Փոքր քանակությամբ թույնի փոշին , մեծ քանակությամբ չըի մեջ լուծվելով , չի վոչնչացնում մրիկը , սպորները չեն մեռնում : Փորձերը ցույց են տվել , վոր խոնավ վայրերում այս յեղանակով ախտահանվուծ սերմերը նորից հիմնաղացել են 20-50 տոկոսով : Հետևապիս , ախտահանումից մեծ հետևանքներ ստանալու համար պիստի նկատի ունենալ տեղական պայմանները և ըստ այն , այս կամ այն յեղանակով կատարել ախտահանումը : Միաժամանակ չոր ախտահանման դեպքում անձրեա ժամանակ չօբեաք և ցանել :

Չոր ախտահանման ժամանակ պիտք ե զգուչ լինել , քիթը և բերանը ծածկել թաց թաշկինակով , կամ դիմակ հագնել : Բանվորները պիտի չուտ-չուտ ձեռքերը լվանան : Գարնանցանի ընթացքում պլանով նախտեսված սերմերի ախտահանումը 100 տոկոսով ապահովելու համար այժմյանից ըստոր չըջաններում պիտի նախապարաստական աշխատանքներ կատարել , համապատասն քանակությամբ գեղորայք , գործիքներ , մեքենաներ , տակաւներ , և այլ պարագաներ ունենալու համար : Պետք ե ունենալ նաև համապատասխան կազրեր , վորն ամենաղլիստորն ե , յեթե նկատի ունենայ անցյալի փորձը : Այս աշխատանքի վրա պիտի մեծ ուշադրություն դարձնել և ամեն մի դյուզում ախտահանման գործին լավ տիրապետող դրան մեկ աշխատող ունենալ : Վնասառուների դեմ կռվող ընկերությունն (ՈԲՎ) այս կարևոր համբամանքի վրա մեծ ուշադրություն պիտի դարձնի : Նա պետք ե գլխավորի ամբողջ ախտահանման աշխատանքները , վորոնք բերքի վորակի բարձրացման ազգակներից մեկն են : ՈԲՎ-ն պետք ե միջոցներ ձեռք առնի արագ կերպով ամբողջաւթյամբ մեքենացնելու ախտահանման աշխատանքները :

ՊԵՂՔԱՐ ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ԴԵՅ

Սերմերի զտման ու տեսակավորման մասին խոսելիս մենք փորոշ չափով շոշափեցինք մոլախոտերի հարցը, ինչպես տեսանք՝ դրանք մեծ չարիք են կուլտուրական բույսերի համար, նրանց ամենավտանգավոր թշնամիներն են, վորովճեան դաշտում խում են նրանց տեղը, հողից վերցնում են աննդարար նյութերը, խոնավությունը, չերմությունն ու արել, վորոնք այնքան անհրաժեշտ են բույսերի համար, զրկվում են նրանց լույսից մեծ չափով ոգտվելու հնարավորությունից: Մոլախոտերն, ավելի արագ անեցողություն ունենալով, ավելի մեծ քանակությամբ ջուր են զոլորչիացնում, հետեւ պես և ավելի մեծ քանակությամբ սնունդ վերցնում, վորով դրկում են կուլտուրական բույսերին հողում յեղած ջուրն ու սնունդը լրիվ ոգտագործելուց: Այս բոլորը մեծ չափով աղցում են բերքի վրա: Բացի դրանից, մոլախոտերը հանդիսանում են այն բունը, վորտեղ մեծ չափերով զարգնում, բազմանում ու տարածվում են բույսի վնասատուներն ու հիվանդությունները և մեծ վնաս են հասցնում կուլտուրական բույսերին, զրկելով մեզ բարձր և վորակավոր բերքից:

Վոչնչացնելով մոլախոտերը, մենք վոչնչացրած կլինենք և վնասատուների բունը:

Ահա, թե ինչու մենք պիտի ուժեղ պայքար մղենք մոլախոտերի դեմ: Այս պայքարը պիտի մղվի միահամուռ, բոլորի կողմից: Մեր կոլտնտեսություններն ու խորհուտեսությունները, չքալոր-միջակ մենասնաեները պետք են լավ մտածեն այս բանի մասին և կազմակերպված ուժերով ուժեղ պայքար մղեն զյուղատնտեսության այս վտանգավոր թշնամու՝ մոլախոտերի դեմ, գբանով ապահովելով բերքը, բարձրացնելով նրա թե քանակը և թե վորակը:

Ինչպես ասացին՝ պետք են միահամուռ ուժերով պայքար մոլախոտերի դեմ: Այդ պայքարը պիտի կազմի պարագագումից մոլախոտերի կարեւորակույն որակը: Դաշտերից պի-

տի վերացնել բոլոր միջնակները, վորոնք մոլախոտերի ու վնասատուների ամենամեծ բունն են հանդիսանում: Միջնակների վերացման համար ուժեղ պայքար պիտի մղեն մեր կոլտնտեսությունները: Կան շրջաններ, ինչպես լենինականը, Նոր-Բայրազեալ և այլն, վորտեղ միքանի գյուղերի կոլտնտեսությունները դեռ իրենց դաշտերի միջնակներն ամբողջովին չեն վոչնչացրել:

Բայց և կյան այս յերրորդ գարնանաշանին պիտի անողոք պայքար հայտարարել ու վերացնել բոլոր միջնակները և վարել խոռան մնացած հողերը: Մենասնտեսները նույնական պիտի ուժեղ պայքար մղեն միջնակները վերացնելու համար, գրանք մաքրեն զանազան վնասատուների բուն հանդիսացող մոլախոտերից:

Ինչպես ասացինք՝ այս պայքարը պիտի մղվի ընդհանուր, միասնական ու կազմակերպված կերպով, հակառակ դեպքում նպատակին չի ծառայի: Վորեւ տեղ մնացած մոլախոտերը, կամ վնասատուները նորից կտարածվեն ամբողջ դաշտը և թափած աշխատանքն իդուր կանցնի: Բայց և կյան յերրորդ գարնանացանի լուսնով պիտի լինի՝ անողոք ուժեղ կոլիզ միջնակների վերացման և մոլախոտերի վոչնչացման համար: Լավ և ճիշտ հիմունքներով կազմակերպված մոլախոտերի վոչնչացումը 15-20 տոկոսով կրարձրացնի բերքատվությունը:

ՎԱՂ ԿԱՏԱՐԱԾ ՑԱՆՔԸ ԲԱՐՁՐ ԲԵՐՔԻ ԳՐԱՎԱԿԱՆՆ Ե

Գյուղատնտեսության վորակական ցուցանիշերի բարձրացման համար խոչոր նշանակություն ունի բոլոր աշխատանքների ժամանակին կատարելը: Ժամանակին կատարված ցանքը, քաղհանը, ժամանակին բերքը հավաքելը 2-3 անգամ բարձր բերք ետալիս:

Անցյալ տարվա ցանքը, մշակումը, բերքահավաքը և ուրիշ շատ աշխատանքներ ժամանակին չկատարելու հետևանքով մենք միքանի կուլտուրաներից պակաս բերք ստացանք:

Անցյալ տարվա փորձը հաշվի առնելով, մեր աշխատանքներն այնպէս պիտի կազմուերապել, վոր գյուղատնտեսական յուրաքանչյուր աշխատանք ժամանակին սկսվի ու ժամանակին ավարամի: Թե Սորճրդային Միության միջանի փորձադաշտերում և թե Հայաստանի փորձադաշտերում կատարած փորձերը վազուց արդեն ավացուցել են, վոր ուշ կատարած ցանքը զգալիորեն պակաս բերք ե տալիս: Որինակ, Միջն Վոլգայի ըրջանում կատարված փորձը ցույց ե տվել, վոր 7 որ ուշացած ցանքը 28 տոկոսով պակաս բերք ե տվել:

Կաղ ցանք կատարելու համար ամենից առաջ պիտի իմանալ, թե այս կամ այն ըրջանում ցանքը յե՛րք պիտի սկսել, և յերբ ավարտել: Նայած կիմայական պայմաններին, տարբեր ըրջաններում տարբեր ժամանակ են սկսում ու ավարտում ցանքի աշխատանքները: Բացի դրանից, նշանակություն ունի և այն հանդամանը, թե զարունը յերբ ե բացվում: Անցյալ տարի ամբողջ Հայաստանում ցանքն ուշ սկսվեց և ուշ վերջացավ:

Ցանքի աշխատանքներն այնպէս պիտի կազմակերպել, վոր միջանի որ տեի, մանավանդ մեր չորային ըրջաններում և անջրդի հողերում պետք ե շտապել շուտ կատարելու, վոր պեսզի բույսը հնարավորություն ունենա ոգտագործելու հօգում յեղած խոնավությունը: Պիտք ե ամեն կերպ աշխատել, վոր գարնանը հողում յեղած խոնավությունը բույսերի համար իջուր չկորչի:

Մեր անջրդի ըրջաններում ցանքը պիտի կատարել 7-10 որում:

Ավելի իրոնավ ըրջաններում, ինչպես՝ Ալլահվերդի, Դարաքիլիսա և այլն՝ 10-15 որում: Բացի դժանից, պետք նկատի ունենալ և բույսի առանձնահատկությունը վաղ ցանքի վերաբերմամբ: Ավելի շուտ պետք ե ցանել ցորենը և զարին: Դրանք այնքան մեծ չերմաստիճան չեն պահանջում, ինչպես տեխնիկական կուլտուրաները՝ բամբակը, ծխախոտը, ճակնդեղը և այլն: Դրանց ցանքը կատարելու համար

բավարար քանակությամբ առաքություն ե հարկավոր: Յեկնելով դրանից, պիտի այնպէս դասավորել, և այնպիսի հաջորդականությամբ ցանել, վոր բոլոր կուլտուրաների համար ել ժամանակին կատարված ցանքը վաղ ցանքի լինի:

Պետք ե նկատել, վոր ժամանակին կատարած ցանքը շուտ ծլելով, հնարավորություն կտա մշակման աշխատանքները շուտ կատարել, ավելի շուտ կհասունանա և բերքահարվաքը շի ձգձգվի:

Վաղ ցանքը մի առավելություն ել ունի, այդ այն և, վոր կուլտուրական բույսը շուտ կծլի, յերբ դեռ չեն ծլել բուլոր մոլախոտերը, և նրանց հետ պայքարելով ավելի դիմաց կուն կլինի, չի խեղզվի մոլախոտերից:

Դաշտային ըրջաններում ցանքը պիտի սկսել ապրիլի առաջին կեսից, իսկ տեխնիկական կուլտուրաների ցանքը՝ ապրիլի յերկորդ կեսից և վերջացնել մայիսի առաջին կեսին:

Նախարեսնացին ըրջաններում ցանքը պիտի սկսել ապրիլի կեսից և վերջացնել մայիսի կեսերին:

Լեռնային ըրջաններում, վորանդ գարունն ուշ ե բացվում, ցանքն սկսվում ե ապրիլի 2-րդ կեսից և վերջանում մայիսի վերջերին:

Զյունը վերանալուց անմիջապես հետո, յերբ հնարավոր և ցանք անել՝ պետք ե առաջին հերթին ցանել դարբին, ցորենը, ապա հածարը, խոտաբույսերը, իսկ դրանից հետո՝ շարքահերկ բույսերը:

Բամբակը պիտի ցանել ապրիլի 18-ից 20-ը: Սածիլավոր բույսերի սածիլները վաշտ պիտի դուրս բերել ցրտահարության վտանգն անցնելուց անմիջապես հետո:

Նկատի ունենալով այս բույրը, յուրաքանչյուր ըրջան, յելնելով իր ադրոնոմների և տեղացիների փորձերից, իր ըրջանների համար պիտի վորոշի գարնանացանն սկսելու և ավարտելու ժամկետները և կուլտուրաների հաջորդականությունը:

Ցանքը ժամանակին սկսելն ու ավարտելը սոց. սեկտորի

համար պարտադիր պիտի լինի : Թերացողներին պետք ե պատասխանառության կանչել : Աչքաթող չպետք ե անել բերքի բարձրացման այս կարևոր ազգակը :

ՏԵՍԱԿԱԾՈՐ ՍԵՐՄԵՐ

Բերքի բարձրացման գործում խոշոր դեր են խաղում նաև տեսակավոր սերմերը : Այս տեսակետից աշնանացան ավելի նպաստավոր պայմաններումն ե գտնվում՝ նկատի ունենալով «ուկրայնկայի» և «կոռպերատորկայի» լայն տարածումը մեր նախալեռնային շատ ըրջաններում : Դրությունն այդպես չե գարնանացան ցորենի և գարու վերաբերմամբ :

Մեր տեղական հացահատիկների սերմացուները խառնուրդ են միքանի տասնյակ տեսակների, վորը նույնակե իշեցնում ե բերքի քանակին ու վորակը : Որինակ՝ գարնանացան ցորենը խառնուրդ ե միքանի տեսակների, ինչպես՝ բիոտավոր և անքիստ ցորեններ, սպիտակ և կարմիր հասկավոր, սպիտակահատ ու կարմրահատ և այլն : Ահա, այսպիսի խայտարգետ խառնուրդ ե հանդիսանում մեր սերմացուն, վորի տեսակավորումն ու միատարր դարձնելը շատ մեծ ջանքեր ե պահանջում :

Նայած վայրին՝ այս կամ այն տեսակից ավելի շատ ե մնում :

Այսպիսի խառնուրդ սերմացվից, պարզ ե, վոր լավ բերք ստացվել չի կարող : Խառնուրդ սերմացվի յուրաքանչյուր տեսակը տարբեր վերաբերմունք ունի դեպի յեղանակի այս կամ այն փոփոխությունը և զանազան հիվանդությունները, հետևապես այս տեսակներից տվյալ տարրվա կլիմայական ու այլ պայմանների համապատասխան, մեկը կամ մյուսը լավ բերք կտան, իսկ մնացած տեսակները՝ վատ : Խառը սերմերով կատարված ցանքն ամեն տարի քիչ փոփոխվում ե և խառնուրդի մեջ գերակշռում ե յեղած այս կամ այն տեսակը : Յեթե տարին տվյալ տեսակի համար նպաստավոր ե, ապա ուժեղ աճում ե այդ տեսակը, լավ թփակալվում

ե, ունենում է խոչոր հասկեր, մեծ և շատ հատիկներ : Հնդկակառակը՝ վատ, յերաշտ տարում դիմանում են այն հասկերը, վորոնք լավ են տանում յերաշտը : Հետևապես՝ բնական ե, վոր տեսակներն ընտրելիս պետք ե զտել խառնուրդը և թողնել այն տեսակները, վորոնք լավ են դիմանում տեղական պայմաններում : Ոորհրդային Միության զանազան փորձագաշերում այդ միջոցով են առաջացել գարնանացան շատ տեսակներ : Մեր տեսակավոր ամենալավ սերմերն առաջացել են նույն հասկեց :

Տեսակավոր սերմերը պիտի ընտրել ամեն մի շրջանի կլիմայական պայմաններին հարմարվող սերմերից : Որինակ՝ ջրասակավ, չոր չըջանների համար պետք ե ընտրել այնպիսի տեսակներ, վորոնք կարողանան դիմանալ չորային պայմաններին և քամիներին, իսկ խոնավ տեղերում դիմանալ զանազան հիվանդությունների, ինչպիսի՝ ժանդ, պառկել և այլն : Բացի նրանից, վոր տեսակը պիտի դիմանա աննպաստ պայմաններին, այլև պիտի ունենա բարձր բերքատվություն, խոշոր հասկեր, հատիկի բարձր վորակ, վաղահասություն և այլն :

Ահա այս ուղղությամբ մեր փորձադաշտերը պիտի մեծ աշխատանք ծավալեն՝ տեղերին տեսակավոր սերմեր տալու համար : Հողժողկոմատը և փորձնական հիմնարկները պիտի աշխատեն լուծել գարնանացան տեսակավոր սերմացու ունենալու խնդիրը : Հայաստանի բամբակ, միավորումն այս գարնան, վորքան հնարավոր ե, մեծ քանակությամբ տեսակավոր բամբակի սերմացու պետք ե տարածի, քանի վոր մի շաբք տարիների փորձով ապացուցել ե, վոր որինակ՝ նիմիտ մատերիալ, կարայազ կինդի, նովրուսկի տեսակները լավ բերք են առավել մեղ մոտ :

Լինինականի փորձադաշտը չըջանին տեսակավոր սերմացու տալու ուղղությամբ վորոշ քայլեր արել ե՝ չըջանի վորոշ դյուղերում և խորհանտեսություններում տարածելով : Գարնան ցորենի Ցեղում տեսակավոր սերմացուն : Բացի

դրանից, մշտակի վորոշ տեղերում և խորհանտեսության մեջ ցանվում են գարու պղնձացեղ Փլաբբում տեսակները:

Մեր խորհանտեսություններն ու կոլտնտեսություններն այս գարնանից պիտի մնմաշխանք կատարեն փորձեր դնելու տեղի պայմաններին հարմարվող տեսակալոր սերմեր ունենալու համար, վորը մեծ չափով կրարձրացնի բերքի թե՛ քանակը և թե՛ վորակը:

ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄ

Բերքի բարձրացման համար պտկառ նշանակություն չունի նաև հողը պարարտացնելը:

Բույսերն ամեն տարի անդամդաստ հողից վերցնում են նրա մեջ յեղած սննդանյութերը, և տարեց տարի հողն ալքատառում և ու այլիս չի կարողանում բույսի նորմալ աճեցողությանը բավարարել անհրաժեշտ սննդանյութերով, վորի հետեւնքով հետզհետեւ բերքն սկսում է պակասնել, իսկ հողն անբերքի յեղանում: Աւելման պիտի վերականգնել հողի բերքատվությունը:

Ինչպես ե լուծվում մեզ մոտ այս հարցը:

Չատ տեղերում 2-3 տարի չարաւնակ ցանում են միենալուն հողը, հետո մի տարի հանդիսատ թողնում (հարու թողնում): Արտը ծածկվում է խոսով, վորը նորից քաղում են: Հաճախ այդ արտերը հանդիսանում են, վորպես արտատեղ, վորի հետեւանքով հողը տրորվում է, ավելի պնդանում, ավելի շատ ջուր կորցնում: Նա չի կարողանում խոնավություն հավաքել և այն ցանկալի կծկացն կազմությունն ուռնենալ, ինչ անհրաժեշտ է բույսերի աճման համար: Չատ տեղերում վարելահողի մոտ կենը խամ են թողնում՝ «հանգստանալու»: Սրանից պահասում են նախ ցանվելիք տարածությունը և յերկրորդ՝ ցանկալի հետեւանքի շենք համառում:

Հողի բերքատվությունը վերականգնելու միակ ուղիղ միջոցը պարարտացներն են ցանքաշրջանառությունը: Այս միջոցներն են, վոր լուծելու յնն հողերի բերքատվության՝

նրանց մեջ սննդանյութերը կանոնավոր կուտակելու իրնդիրը:

Պարարտացման միջոցով մենք հողի մեջ մտցնում ենք բույսին անհրաժեշտ սննդանյութեր: Բույսերը, սննդանյութերը նյութերով, աճում են, զարգանում և լավ բերք տալիս:

Բույսերին այնքան անհրաժեշտ հազարավոր տանն պարարտանյութերը մեզ մոտ իրուր կորչում են, զրկելով մեկ միքանի միլիոնի համար բերքից:

Բերքատվության բարձրացման համար պետք է պայքար մղել և վոչ մի ցենտներ պարարտանյութ չթողնել անողապաղործելի: Գյուղանտեսության սոցիալիստական սեկտորը՝ կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունները, ինչպես և չքաղոր ու միջակ մենատնտեսները պիտի պայքարեն բարձր բերքատվության համար, ովտաղործելով թանկարժեք պարարտանյութերը:

Բույսին անհրաժեշտ լրիվ սննդանյութերով հարուստ օպարաբունյութն է գոմազը: Գոմազը հողը պարարտանելիս, մենք հողին ամբողջությամբ վերազարձնում ենք այն բոլոր սննդանյութերը, ինչ առաջին բերքին հողից վերցրել են բույսը: Գոմազը պարարտանյութերից ամենալավին է: Նա բացի հողը սննդանյութերով հարստացնելուց, վերականգնում և նրա քայլքայլած կազմությունը, տալով նրան կլծկային կազմություն: Նա հողին ընդունակ է դարձնում իր մեջ մեծ քանակությամբ ջուր պահելու:

Գոմազը կանոնավոր պարարտացած հողերը միշտ ել կրկնակի բերք են տալիս:

Գոմազի վրա առհասարակ չատ քիչ ուշադրություն է դարձվում: Պահում են անխնամ, վորի հետեւանքով, նրա միջի թանկարժեք բույսին ամենասանհրաժեշտ սննդանյութը՝ ազուր հետզհետեւ ցնդում է: Մեր խորհրդային տնտեսություններն ու կոլտնտեսությունները պիտի վրջ տան իրենց

անհանդուրժելի անսւշադիր վերաբերու համար դեպի գործադրը՝ այդ անփոխարինելի պարարտանյութը:

Դոմաղը համար գոմերի մոտ պիտի առանձին հորեր չենել և նրա մեջ հավաքել գոմալլը, պետք է հետևել, վոր այդ հորերի մեջ հավաքվի նաև նրա ջրալի՝ մեզի հետ խառն մասը:

Հորերը պետք ե լավ ծածկել: Այնտեղ, վորտեղ հորեր չկան, գոմաղը պիտի լավ հավաքել ջրալի մասի հետ միասին, լավ ու կանոնավոր կույտ անել ու հողով լավ ծածկել: Ենչպես ասացինք՝ պիտի լավ հետևել, վոր բույսին անհրաժեշտ, թանկարժեք սննդանյութը չցնդի ու չկորչի:

Գոմաղը խնամքով պիտի դաշտ տեղափոխել, այստեղ կույտեր սարքել և ձմռան վերջերին խնամքով, հավասարապես փոել դաշտի վրա և ապա վարել:

Գոմաղը պիտի պարարտացվեն տեխնիկական թանկարժեք կուտուրաների և բանջարանոցների դաշտերը, վորոնք կրկնակի չափով արդարացնում են իրենց վրա դրված ծախսերը:

Արժեքավոր պարարտանյութեր են նաև խառն աղբն (կոմպաստ) ու մոխիրը, վորոնցով այնքան հարուստ են մեր դյուզերը: Մեր դյուզի փողոցներում դրանցից բլուրներ են կազմվել, վորոնք խառնվարում են անցուղարձը, խիստ հակառակ ջապահական դրություն ստեղծում դյուզում: Կան դյուզեր ել, վորոնք հասկացել են խառնաղբի ու մոխիրի նշանակությունը: Նրանք սիստեմատիկ կերպով մաքրում են փողոցները և աղբը դաշտ տանում:

Խառնաղբը պահելու համար ել պիտի առանձին, կանոնավոր տեղեր չենել և հավաքել այնտեղ: Հավաքելիս պիտի չերտ-չերտ լցնել և ջրել, վոր լավ քայլայվի, վոր հողի մեջ ընկնելով, նրա քայլայման պրոցեսները կանոնավոր կատարվեն և խառնաղբը վերածվի այնպիսի նյութերի, վորոնք մատչելի յեն բույսերին:

Հենց այս զարնան սկզբից մեր դյուզերի փողոցները

պիտի մաքրել և դաշտ տեղափոխել խառնաղբն ու մոխիրը: Պիտի ոզովել ամեն մէ արև օրից և պատեհ առիթից՝ այդ աշխատանքնեւը կատարելու համար:

Եսը եժան և փշացող պարարտանյութերից մեկն ել մոխիրն ե, վորով գարճալ բավական հարուստ են մեր գյուղերը: Զնայած մոխիրն իր մեջ չի պարունակում բույսի համար անհրաժեշտ բոլոր սննդանյութերը, բայց նա նույնպես մեծ չափով բարձրացնում ե բերքի թե քանակը և թե վորակը:

Խառնաղբն ու մոխիրը, ինչպես և բոլոր պարարտանյութերը պետք ե փոել դաշտի յերեսին հավասար կերպով և աղա վարել: Հակառակ դեպքում, մի տեղ չափ, մյուս տեղ քիչ ընկնելով, պարարտանյութը բույսերի համար տարբեր միջավայր կստեղծի: Սերմն ընկնելով տարբեր քանակով սննդանյութեր ունեցող տեղերում, միահավասար աճեցողություն չի ունենա: Մի տեղ լավ կաճի, մի ուրիշ տեղ չուտ կհասունանա, մի այլ տեղ՝ ուշ այսպիսով, դաշտում խայտարգետություն կառաջանա, վոր ցանկալի յերեսությ չե բերքի համար: Պետք ե բոլոր պարարտանյութերը փոխ հավասար հանակով և հավասար շերտով:

Բացի տեղում յեղած պարարտանյութերը, գոմաղը և մոխիրը հավաքելուց և դաշտ տանելուց, կոլտնտեսությունները պետք ե քաղաքից և գործարաններից ևս տանեն այդ տեղ յեղած ամեն մի թափիթփուկ, վորը կարող ե իբրև պարարտանյութ ծառայել: Այդ տեղերում մեծ քանակությամբ պարարտանյութեր կան, վորոնց մեծ մասն ովագործում են մերձքաղաքային տնտեսությունները, իսկ վորոշ մասը մնում և անողտագործելի:

Գոմաղը, խառնաղբը կոչվում են որդանական պարարտանյութեր, վորովհետև ստացվում են կենդանական ու բուսական մնացորդներից և թափիթփուկներից:

Կան նման հանգային պարարտանյութեր, վորոնք պատրաստվում և ստացվում են գործարաններից: Դրանք են՝ սուպերֆուսիվատը, ցիանամիգը, ամոնիոսուլֆատը և այլն,

վարանցով միքանի տարի յի, Ես փորձեր են արշում մեր շրջանների զանազան կետերում, մանաւանը բամբակացան շրջաններում: Այս պարարտանյութերին չառ լազ Հայութ են մեր խորհանտեսություններն ու կուսնուեսությունները. Դրանք նույնպես մեծ չափով բարձրացնում են բերքի վորակն ու քանակը:

Հանքային պարարտանյութով պարարտացնելիս պետք է պարարտանյութը ցրել հողը վարելուց առաջ, փորից հետո պետք է փոցինել: Խոկ յեթե արաթ և արվելու, հանքային պարարտանյութը տրվում և արտից առաջ: Պարարտանյութը հավասար քանակությամբ, հավասար շերտով ամբողջ դաշտի վրա պետք է չաղ տալ, փոցինել, այնպես, վոր լավ խառնի հողին: Հանքային պարարտանյութից հետո (յեթե գարնան և կատարվում) ցանքը պիտի կատարել Յ-Շ որ հետո, նայած, թե ինչով է պարարտացված: Թե ինչ քանակությամբ պետք է պարարտանյութ տալ, այդ վորոշում և, նայելով հողի կաղմությանը և մշակվելիք բույսերին: Ցերեկար տարիներ ցանված հողերը, վորոնք ուժասպառ են յեղել և կորցրել են իրենց կծկային կառուցվածքը, պետք և լրիվ զոմալը ստանան, այն եմ հեկտարին 40 տոնն: Այդ քանակությունը բավական է Յ-Շ տարի միմյանց հետեւց բարձր բերք ստանալու համար: Քիչ ուժասպառ յեղած հողերին ավելի քիչ պարարտանյութ են տալիս:

Հանքային պարարտանյութ պիտի տալ 50-300 կիլո, նոյնական հողին և բույսի պահանջներին:

ՑԱՆՔԱԾՐԱԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Ինչպես տեսանք՝ ամեն տարի բույսերը հողից վերցնում են սննդանյութեր և քանի գնում հողն այնքան աղքատանում է և անբերի յի գտնում՝ պակասում և նրա բերքատվությունը: Ամեն մի բույս սննդանյութերի միևնույն պահանջը չունի. տարբեր բույսեր տարբեր քանակով և հողի տարբեր շերտերից տարբեր սննդանյութեր են.

Վերցնում: Բացի գրանից բույսերը գեղի ջուրը և դեպի հիվանդությունները միատեսակ վերաբերմունք չունեն: Դրանից հետեւմ ե, վոր բույսերն այնպիսի հաջորդականությումք պիտի ցանել, վոր կարողանանք նրանցից ամենամեծ արդյունք ստանալ: Բերքատվության բարձրացման ազդակներից մեկն ե ցանքաշրջանառությունը. սմեն մի շրջան պետք է ունենա իր ցանքաշրջանառությունը, վորը կազմելիս պետք է յեղնել դիրեկտիվ որդանների համապատասխան վորոշումներից:

Համամելիութենական Հողժողկոման այդ առթիվ ունի հետևյալ վորոշումը:

1. Ցանքաշրջանառությունը պետք է ապահովի շրջանին տված պլանի կատարումը՝ ինչպես ցանքի արածությամբ, նույնպես նպաստի կուլտուրաներին և նրանց բերքի բարձրացմանը:

2. Ցանքաշրջանառությունն ամեն դեպքում պետք է համապատասխանի ավյալ շրջանի կամ տնտեսության մասնագիտացման նպատակներին և ինդիբներին: Արինակ՝ Միջն Սովիայում բամբառկի բերքատվության բարձրացման, անսանսպահական շրջաններում կերպարույսերի բերքի բարձրացման և այլն:

3. Ցանքաշրջանառության հիմնական ինդիբներից մեկը պիտի լինի՝ պայքարել մոլախոսերի և վնասատուների գեմ:


Շրջանները, կունանեսությունները, խորհումնեսությունները, յելնելով վերոհիշյալից, տեղի ազրողերունակի հետ միասին հողբաժնի դեկավարությամբ պետք է կազմեն տեղի ցանքաշրջանառության նախադիմքը և ներկայացնեն Հողժողկոմատ հաստատելու, վորից հետո անցնեն նրա կիրառմանը:

Հողժողկոմատը պետք է աշխատի շտապ կիրապվ կաղմակերպել ցանքաշրջանառության Հանրապետական բյուրո և շտապի ամեն մի շրջանի համար մշակելու համապատասխան ցանքաշրջանառություն, վորպեսզի հնարավոր լինի առջիկա գարնանից անցնել նրա կիրառմանը:

Յանքաշրջանառությունն այն անհրաժեշտ աղբուծեռնարակումներից մեկն ե, վորը մեծ չափով բարձրացնում է բերքատվությունը: Մեր նախալեռնային և լեռնային շրջանները, վորտեղ պարապում են անասնակահությամբ, պետք ե անցնեն խոսադաշտային ցանքաշրջանառությամբ: Կիրառելով ցանքաշրջանառություն, բույսին հնարավորություն կտրվի կանոնավոր անվելու, աճելու, պայքարելու մոլախոսերի և հիվանդությունների գեմ և բարձր բերք տալու: (Տես նկ. 4):

Շարքացան

Բարձր բերք ստանալու համար մեծ նշանակություն ունի նաև այն, թե ինչ ձևով ու յեղանակով ե ցանկում: Յանքի մի



Նկար 4.—Խոփիկավոր շարքացանի բնյանելու տեսքը.—


Ա սերմի օրկղ, Բ առանցք, Վ սերմատար խողովակներ, Գ խոփիկներ, Դ առողջապահ, Ե խորությունը կանոնավորող:

Քանի ձեզ կան՝ շաղացան, բնաշան, շարքացան: Շարքացանը մեզ տալիս ե 15-20% բերքի բարձրացում և 30-ից 50% սերմի տնտեսում:

1. Շաղացանի (տես նկար №-5) ընթացքում սերմը շաղացիս հավասար չափով չի տարածում ամբողջ դաշտի յիրեսը, մտնալիքների քամի որերին, յերբ փորձված ցանողն անդամ չի կարողանում հավասար կերպով սերմը շաղ տալ: Յերբեմն անհնար և լինում ցանք կատարելը.

2. Շաղացանի դեպքում սերմը մի տեղ շատ և ընկնում, մի տեղ քիչ, վորից բույսերը մի տեղ խիստ բուսնելով, իրար խեղդում են, իսկ մի ուրիշ տեղ՝ նոսր են բուսնում, վորով մոլախոսերի համար հնարավորություն ե տրվում արագ ու առաջ գարցանալու և կուլտուրական բույսերին խեղդելու:

3. Շաղացանից հետո կամ պիտի փոցինել, կամ բարձախոփի գութանով վարել, սերմը ծածկելու համար: Մեր շատ գյուղերում տարածված ե ցանելուց հետո արորով վարելու սովորությունը, վորը շատ մեծ վնաս ե հասցնում: Սերմերը շատ խորն ընկնելով, մեծ մասով չեն ծլում:



Նկ. 5.—Սերմերի դասավորությունը շաղացանի դեպքում

4. Շաղացանի դեպքում սերմերի մի մասն ընկնում ե շատ խոր, մի մասը՝ յերկո, մի մասն ել մնում ե հողով բնլորովին չծածկված և կեր ե դառնում թռչուններին: Սերմերը, հողի մեջ ընկնելով տարրեր խորության մեջ, միաժամանակ չեն


ծլում, ծլելիս ել լինում են անհամաչափ: Յերես ընկած սերմերի մի մասը թեև ծլում է, բայց համալատասխան քանակության իոնավություն չստանալով, չորանում է, մի մռան ել բոլորովին չի ծլում:

3. Շատ խորն ընկած սերմերի մի մասը չի ծլում, մի մասն ել թեև ծլում է, բայց այդ խորությունից դուրս գալու ուժ չունենալով, այնտեղ վոշնչանում է:

Այսպիսով՝ ինչպես տեսնում ենք, շաղացանի դեպքում մեծ քանակությամբ սերմ իդուր փշանում է, դաշտը լինում է խայտարկեալ, հասկերը միաժամանակ չեն հասունանում, վորը մեծ չափով խանգարում է բերքահավաքին:

Շաղացանով ցանելիս սերմը կրկնակի չափով են վերցնում, վորպեսդի մի մասը փշանալուց հետ զեթ միացածք բավարար ծիլեր տա: Այս ե պատճառը, վոր չաղացանի դեպքում մեծ քանակությամբ սերմ է դնում:

Այլ պատկեր ունի շարքացան՝ մեքենայով կատարած ցանքը: Այն համաչափ և միմյանց հավասար հեռավորություն ունեցող շարքերով, հեռվից նայելիս անմիջապես աչքի յին ընկնում շաղացանը և շարքացանը և այս յերկուսի առարկերությունը ցայտուն կերպով նկատվում է:



Նկ. 6.—Սերմերի դասավորությունը շարքացանի գեպում

1. Շարքացան մեքենայով կատարած ցանքի սերմերը բալորն ել ընկնում են իրարից հավասար հեռավորության վրա (տես նկ. 6):

2. Սերմերը բոլորն ել ընկնում են հավասար խորությամբ և մեր ցանկացած խորությամբ, վորովհետեւ մեքենան այնպիս և հարմարեցված, վոր ինչպիսի խորություն ցանկանանք, այնպիսի խորությամբ ել կցանենք:

3. Բաց սերմեր չեն մնում, յերես ընկած սերմեր չեն լինում:

4. Բոլոր սերմերը համաչափ և միաժամանակ ծլում են: Այս դեպքում հասկերը հասունանում են միաժամանակ, վորի առավելությունը բերքի քանակի ու վորակի բարձրացման տեսակետից բոլորիս համար պարզ է:

5. Քամի որերին հնարավոր ե ցանել, վորը մեծ նշանակություն ունի ցանքը շուտ վերջացնելու համար:

6. Շարքացանի դեպքում մենք կարող ենք կանոնավորի ցանքի մեջ սերմացուի քանակը, այսինքն՝ մի հեկտարին քանի ցենտներ սերմացու վոր ցանկանում ենք, այնքան ել կարող ենք ցանել, կարող ենք մեքենան այնպիս կանոնավորել, վոր մեր ցանկացած նորմայով ցանի:

7. Շարքացանի դեպքում շարքերն իրարից հավասար նաև առավորության վա լինելով, բույսերը բոլորն ել հնարակություն ունեն մեծ քանակությամբ լույսից և տաքությունից ուղավելու, վորը դարձյալ մեծ նշանակություն ունի բերքատվության տեսակետից:

Շարքացան մեքենան անիվների վրա ամրացված մի արկղ է, վորն ունի սերմ թափելու անցքեր: Նայած մեքենայի մեծության, այդ անցքերը լինում են 11, 13, 24 և այլն: Մեքենան ունի առաջնաքաշ անիվներ: Տրակտորի ուժով քաշվող շարքացաններն առաջնաքաշ չունեն: Արկղի տակ, առաջի մասից յերկաթե շրջանակների վրա ամրացված են յերկաթե մանր խոփիկներ կամ ափսեներ: Սրանք դասավորված են իրարից հավասար հեռավորությամբ: Դրանց թիվը համապատասխան ե արկղից սերմացվի թափվելու անցքերի թվին: Անետինե խողովակով իրովիկները միանում են սերմացվի անցքերին:

Մեքենան շարժվելիս խոփիկները կամ արհանձները հռով
չերտը ճեղքում են և հատիկի համար տեղ բացում, վորտեղ
հատիկները մեկ-մեկ շարվում են և նորից հողով ծածկվում :
Մեքենան ցանելիք սերմի նորման և նրա ցանվելու խորու-
թյունը կանոնավորող յերկաթյա ձողեր ունի : (Լժակներ) :

Ցանքից առաջ մեքենան պետք է լավ մաքրել, նրա բոլոր
պտուտակներն ամրացնել, ցանելիք խորությունն ու սերմի չա-
փը կանոնավորել, ազա դաշտ տանել : Ամեն որ ցանելու աշ-
խատանքը վերջացնելուց հետո, մքենան պետք է դատարկել,
մաքրել և, յեթե հարկավոր է, յուղել, վոր մյուս որվա աշ-
խատանքի համար պատրաստ լինի : Նախ քան մեքենան դաշտ
տանելը, պիտի լավ նայել, կորած մասերը վերականգնել,
կոտրված մասերը փոխել կամ վերանորոգել :

Բոլոր սերմերը ցանելիս միատեսակ խորություն չեն
պահանջում : Նայած սերմերի տեսակներին, նրանց մեծու-
թյանն ու փոքրությանը, պիտի կանոնավորել ցանելու նոր-
ման ու խորությունը : Արկղի առաջին մասում կա խոփիկ-
ները շարժեղ լժակ : Յեթե ուզում ենք խորը ցանել, այդ լը-
ժակը պիտի առաջ քաշենք կիսաղեղի համապատասխան՝ ս-
տամի վրա, իսկ խորությունը փչացնելու համար՝ լժակ
համապատասխան չափով հետ տանենք :

Լժակն այս կամ այն կողմը շարժելիս, խոփիկները հա-
մապատասխան քանակով հողը խոր կամ յերես են ճեղքում :
Սերմի նորման կանոնավորելու համար արկղի հետեվի մա-
սում կանոնավորող լժակ կա : Այդ լժակը դեպի աջ տանելիս՝
քիչ և ցանում, դեպի ձախ՝ շատ և ցանում (յեթե յերեսներս
դպի արկղն ենք դարձրել) : 11 խոփիկանի շարքացանի անի-
վը մի հեկտարի վրա 650 պտույտ ե անում : Յեթե մենք ու-
զում ենք մեկ հեկտարին ցանել 1,3 ցենտոներ ցորեն, ազա
շարքացանի անիվի յուրաքանչյուր մի պտույտին կցանվի
200 գրամ ցորեն :

Իմանալու համար, թե արդյոք ճի՞շտ և դրված լժակը,
շարքացանի ձափի անիվը պիտի բարձացնել (տակը փայտ

դնելով), ցորենը լցնել արկղի մեջ, տակը բրեգենդ փռել և
անիվը պտույտ տալ այն արագությամբ, ինչ արագությամբ,
դաշտում աշխատելիս շարժվում ե շարքացան մեքենան :

Յեթե իրոք ամեն մի պտույտին թափվեց 200 գրամ սեր-
մացու, նշանակում ե մեքենան կանոնավոր ե աշխատում, իսկ
յեթե ավելի կամ պակաս ստացվեց, պիտի մեքենան կանոնա-
վորել՝ լժակը շարժելով աջ կամ ձախ և այնքան, վոր մի
պտույտին 200 գրամ ցորեն ցանվի :

Պիտի մեքենան այնպես կանոնավորել, վոր նա ցանի մեր
ցանկացած խորությամբ և նորմայով :


Ենորհիվ այն հանգամանքի, վոր շարքացանի դեպքում
մենք ցանում ենք նորմայով և բոլոր սերմերն ընկնում են
նպաստավոր միջավայր ու ծրում են, մենք ահադին քանա-
կությամբ սերմ ենք տնտեսում, ինչպես ասինք՝ 30-ից մոտ
50% : Այս տարի գարնանցանին Հայաստանում ցանվելու յէ
132, 515 հեկտար ցորեն և 90 հազար հեկտար դարի : Յեթե
մենք շաղացան անելու լինենք, պետք ե մի հեկտարին ամե-
նաքիչը վերցնենք 2 ցենտներ, իսկ շարքացանի դեպքում 1-1
3 ցենտները միանդամայն բավարար ե : Այսպիսով՝ մենք
միայն դարնանը ցանելիք սերմացվից կտնտեսենք մոտ 70 հա-
զար ցենտներ ցորեն, վորը մեղ համար շատ մեծ նշանակու-
թյուն ունի : Մեր կոլտնտեսություններից շատերի համար
միանգամայն պարզ են շարքացանի առավելությունները :
Շատ կոլտնտեսություններ արդեն վազուց են գործադրում
շարքացան : Այժմ յանից թե բոլոր կոլտնտեսությունները և
թե չքավոր ու միջակ մենատնտեսներն ամեն չանք պիտի դոր-
ծադրեն ձեռք բերելու համապատասխան քանակությամբ
շարքացան մեքենաներ, յեղածները պիտի վերանորոգեն, կա-
նոնավորեն, լրացնեն նրանց պակաս մասերը, վոր ցանքն ան-
պայման շարքացանով անեն :

Շարքացանի դեպքում հողը պիտի լավ վարած, պիտի
լավ փոցկած ու հակասաթեցված լինի, վորպեսզի կոշտերն

ու սերմերը չխանդարեն մեքենայի նորմալ աշխատանքը :
Շատ խոնավ կավային հողերում մեքենանան չպիտի բանեց-
նել մինչև նրա չօրանալը : Հակառակ դեպքում, կավը ծած-
կելով խոփիկները, կիսնդարի սերմերի կանոնավոր թափվե-
լուն :

Այսպիսով՝ կանոնավոր ու ժամանակին կատարելով մի
շարք աղբոձեռնարկումներ, մենք կրկնակի չափով կրար-
ձրացնենք սոցիալիստական գյուղատնտեսության վորակա-
կան ցուցանիշները :

Այժմյանից կազմակերպված ձևով կատարենք բայլչեկե-
յան յերրորդ գարնանացանի նախագալաքաստական աշխա-
տանքները, զորպեսզի կարողանանք 100%-ով կատարել նա-
խատեսված աղբոձեռնարկումները : Այսպիսով մենք կրար-
ձրացնենք թե քանակը և թե վորակը և կատարած կլինենք
հնգամյակի ավարտական տարվա մարտական ինդիբները
գյուղատնտեսության ասպարիդում :



Տարբան 8/II-1932 թ.

Տպագրված ե 17/II-1932 թ.

Գետերատի տուղարան

Դրամեմ 7112 (ը) Հրատար. № 2065 Պատկեր № 457 Տեքտ 8.000

ՀՀ Ազգային գրադարան



NL1016881

1939-163

1

ԳՐԱԴԱՐԱՆ 20 կ. (1 $\frac{1}{4}$) մ.

4447



Н. КАЗАРЯН

АГРОМЕРПРИЯТИЕ К ТРЕТЬЕЙ БОЛЬШЕВИСТСКОЙ ВЕСЕННЕЙ ПОСЕВКИ ПАНИИ

Госиздат ССР Армении
Эревань - 1932